

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԴԱՐՔԱԻԱՅԻՆ ԴԱՐՁՎԱՄԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Խ. Գ. ԲԱՂԻԿՅԱՆ

Դարձվածային միավորները (դարձվածները)՝ որպես լեզվի արտահայտչականության ու պատկերավորման հրաշալի միջոցներ, իրենց ոճական ամենաբազմազան դրսևորումներով հանդես են գալիս կյանքի բոլոր բնագավառներում, հալորդակցական բոլոր ոլորտներում՝ թե բանավոր և թե գրավոր խոսքում: Կարճ ու դիպուկ լեզվական այդ միավորները ամենից առաջ ազգային լեզվամտածողության ամենակուռ և ամենադիպուկ արտահայտություններն են. դրանք իմաստավորվել են ժողովրդի դարավոր կենսափորձով, աշխարհաճանաչողությամբ ու ազգային ինքնատիպությամբ: Իրանցում արտացոլվում են նաև տվյալ լեզվով խոսող ժողովրդի պատմությունը, բնավորությունը, հոգեբանությունը, սովորությունները, զբաղմունքը, արհեստներն ու արվեստը, կենցաղն ու միջավայրը, մի խոսքով՝ ամբողջ կյանքը: Հենց այդ է պատճառը և դրանով է պայմանավորված, որ լեզվական վերաիմաստավորված այս կառույցները ստեղծվում և կիրառվում են թե՛ համազործածական, թե՛ ժողովրդախոսակցական լեզուներում և թե բարբառներում:

Ինչպես լեզվի բառապաշարը, նույնպես և դարձվածային հարստությունը հիմնականում տեղաբաշխվում է երեք շերտերի մեջ՝ գրական, ժողովրդախոսակցական և բարբառային (սրանք էլ ունեն իրենց ենթաշերտերը): Այս հոդվածում մենք կխոսենք միայն ժողովրդախոսակցական և բարբառային (նաև ժարգոնային) դարձվածների մասին, որովհետև լեզվաբանական գրականության մեջ ու դասագրքերում, եթե խոսվում է դարձվածների մասին, ապա խոսքը վերաբերում է հիմնականում դարձվածների գրական շերտին, իսկ հիշյալ երկու տեսակների մասին կամ խոսք չի լինում կամ հպանցիկ է խոսվում:

ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԴԱՐՁՎԱՄԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ.— Դարձվածները ամենից առաջ ժողովրդական ծագում ունեն. դրանց մի մասը նախ առաջանում է ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում, ապա մշակվելով ու կատարելագործվելով գրողների և անհատների կողմից, անցնում է գրական լեզվին: Ի հարկե, սա բոլորովին չի նշանակում, թե գրական լեզվի բոլոր դարձվածներն են այս ճանապարհով անցել: Լեզվում կան հազարավոր դարձվածներ, որոնք ստեղծվել են գրողների, ստեղծագործողների քաղաքական գործիչների, հրապարակախոսների և այլոց կողմից:

Այսպես, հին հունա-հռոմեական բազմաթիվ դարձվածներ (աֆիլլեսյան գառչապար, պրոկրուստյան մահին, դամոկլյան սուր, գորդյան հանգույց, ավգյան ախոռներ մահել և այլն), ինչպես նաև հեղինակային ծագում ունեցող որոշ դարձվածներ («Թուրք ճանապարհները Հոռոմ են տանում»— Լաֆոնտեն, «Ժամանակը իր շավիղից դուրս է եկել»— Շեքսպիր, «Փոքորիկ մի քաժակ ջրում»— Մոնտեսքյու և այլն) որոշակիորեն տարբերվում են ժողո-

վրդախոսակցական և բարբառային դարձվածներից և գրեթե չեն օգտագործվում նշված շերտերում:

Նշելի է նաև, որ հեղինակային ԴՄ-ների մի զգալի մասը անցնում է ժողովրդախոսակցական լեզվին և դառնում համագործածական:

Դրա լավագույն ասպացույցն է մեր ազգային մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը, որի ստեղծած գրեթե բոլոր դարձվածները ժողովրդականացել են, և դրանց մի զգալի մասն էլ անցել է գրական լեզվին: Դժվար թե գտնվի որևէ հայ, որ չիմանա Թումանյանի հետևյալ դարձվածների իմաստները՝ Ձախուղ Փանոս, սուտլիկ ոսկան, մի կաթիլ մեղր, անբախտ վանառականներ, նեսայի փառապղնիս սաբեյ, բալր թանկ է, Կիկոսի մահը, Քաջ Նազար և այլն:

Այլ. Իսահակյանի հեղինակած մի շարք դարձվածներ նույնպես ժողովրդայնություն են վայելում և դարձել են ժողովրդախոսակցական լեզվի անկապտելի մասը. ահա դրանցից մի քանիսը՝ աչքը ճամփին ծով դառնուլ, խելիքն էլա ասել, կուրծքը թոշ տալ, վիզը դնել մեկի շեմին, գլուխը դնելու տեղ չգտնել, փառից-ճողից ևաց փամել, խելիքի տունը մտնել, ծուխ դարձնել և այսպես կարելի է շարունակել ու բազմաթիվ հեղինակային դարձվածներ բերել, որոնք դարձել են համագործածական:

Լեզուներում ավելի տարածված է այն կրևույթը, երբ հեղինակներն իրենք են լայնորեն օգտագործում ժողովրդախոսակցական ու բարբառային դարձվածներ՝ բնական տեսքով, կամ վերամշակելով ու գրական տեսքի բերելով, կամ էլ դրանց նորանոր իմաստներ հաղորդելով: Այդպիսի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել մեր դասական (և ոչ միայն դասական) գրողներից: Դրանց լավագույն օգտագործողներից են դարձել Թումանյանն ու Իսահակյանը, Արտվյանն ու Պոռչյանը, Աղայանն ու Բաքճիյն և շատ-շատերը: Գործածելով ժողովրդական ու բարբառային դարձվածներ՝ գրողները ավելի հարազատ են մնում ժողովրդական լեզվամտածողությանը, դրանցով նրանք ազգային կոլորիտ են ստեղծում և իրենց լեզուն ու ոճը դարձնում են ավելի պատկերավոր, արտահայտիչ ու դիպուկ. դրանց միջոցով անհատականացնում են հատկապես հերոսներին՝ ընդգծելով նրանց ընկերային ծագումը, միջավայրը, կրթական մակարդակը, մասնագիտությունը և այլն:

Ժողովրդախոսակցական լեզվում լայն կիրառություն գտած գլուխն ուտել դարձվածը, որ նշանակում է սպանել, ոչնչացնել, նույն իմաստներով անցել է նաև գրականությանը, սակայն չի դադարել ժողովրդական լինելուց:

Ահա երկու օրինակ՝ «— Դադարեցրեք,— նրա երեսին շարտեց կենտկոմի քարտուղարը,— ամոթ է: Քանի պատանու գլուխ նե կերել» («Գարուն»): Անդրանիկը դիմելով դաշնակներին (նա 1907 թ. հրաժարվել էր դաշնակցական կուսակցության անդամությունից) հայտարարել է. «Մի օր երիտթուրքերը ձեռք գլուխը կուտեն ձեր ազգի հետ միասին» («Ն. Հ., 28. 10. 89»):

Այժմ տեսնենք, թե ժողովրդախոսակցական դարձվածները ինչ առանձնահատկություններ ունեն և հիմնականում ինչով են տարբերվում թե՛ գրական լեզվի ու համագործածական և թե՛ բարբառային դարձվածային միավորներից:

1. Ժողովրդախոսակցական դարձվածները, ի տարբերություն համագործածականների, ժողովրդի անմիջական խոսքի բաղադրիչներն են. դրանք հանդես են գալիս խոսքի՝ տվյալ պահի ու իրադրության պահանջով, մեծ մասամբ զուրկ են հանդիսավորությունից ու պատեթիզմից և գրեթե մշակված չեն: Սրանք կիրառվում են առօրյա խոսակցական կամ կենցաղային ոճերի ոլորտներում: Այս տիպի դարձվածներին բնորոշ է մտքի սրությունն ու վառ երևակայությունը, խոսքի դիպուկությունն ու հումորը: Սրանք բանավոր խոսքին տալիս են աշխույժ ու զունեղ երանգ, ասելիքը դարձնում առինքնող,

տպավորիչ, խոսքը օժտում ժողովրդական մտածողութայանը բնորոշ կենդանի ու թարմ շնչով:

2. Հենց այս առանձնահատկություններով է պայմանավորված այն փաստը, որ ժողովրդախոսակցական ԴՄ-ները առաջին հերթին աչքի են ընկնում լեզվի բառապաշարի ժողովրդախոսակցական շերտով:

3. Ինչպես ժողովրդախոսակցական լեզվին, նույնպես և այս ոլորտի դարձվածներին ընդհանրապես բնորոշ են հարադրությունները, որոնք յուրահատուկ կենդանություն ու շունչ են հաղորդում խոսքին՝ ավելի պատկերավոր ու արտահայտիչ դարձնելով ասվածը, ինչպես՝ շունչ առնել (ֆաջել), սիլի-բիլի անել, փացի տալ, երեսով տալ, թուխս նստել, ձեռ ու ոտ ընկնել, փետրահան անել, բմբուլները փամուռ տալ, բմբուլահան անել, սևերես անել (մնալ), սոխ ու սխտոր բուսնել գլխին, ձեռ ու ոտից ընկնել, էփել-թափել և այլն:

4. Սրանց հատուկ են նաև կրկնավոր կազմությունները, որոնց տեղին ու դիպուկ օգտագործումը նույնպես խոսքին տալիս է շերմություն ու հմայք, շունչ ու թարմություն, ժողովրդայնություն ու կենդանություն: Իերենք մի քանի օրինակ՝ «Մայր ու աղջիկ գլուխ-գլխի նստեցին, Արդամը գնաց պատըշգամք» («Բարուն»): «Լեռն էին սարերը, այն սարերը, որ միայն հովիվ Ավետիսի ձայնով թև-թևի տված պատմում էին...» (Լ. Կ.):

5. Ժողովրդախոսակցական դարձվածների բնորոշ առանձնահատկություններից է և այն, որ դրանցում ներառվում են օտար բառեր՝ հատկապես պարսկերենից, թուրքերենից, արաբերենից, որոնք դառնում են դարձվածների բաղադրիչներ: Ինչպես հայտնի է, մեր լեզվում բավականին մեծ թիվ են կազմում հնագույն փոխառությունները, որոնց մեծ մասը մնացել է միայն ժողովրդախոսակցական լեզվում (չե՞նե չի բացառվում նաև դրանց մի մասի՝ գրականության մեջ օգտագործվելը): Ահա փոխառյալ բաղադրիչներով մի քանի դարձվածներ՝ մուրազդ փորդ մնա, դարմանի տակի ջուր, հացըդ հաբամ լինի, մեկի բոստանը փառ գցել, չիգյարի՞ն գյուլլա դիպչի, սև խաբարը գա, սուգ ու շիվան անել և այլն: Պարզ է, նման դարձվածների մեծ մասը կազմվում է բարբառներում, ապա՝ անցնում ժողովրդախոսակցականին, իսկ սրանց մի մասը՝ գրական լեզվին:

6. Ժողովրդախոսակցական դարձվածների տարբերակիչ հատկանիշ պետք է համարել նաև դրանց արտաբերման ոչ սովորական հնչեբանգը, որի շնորհիվ այս ԴՄ-ները մի տեսակ առանձնանում են սովորական խոսքից և իրենց վրա հրավիրում լսողի ուշադրությունը:

7. Այս կարգի դարձվածները յուրահատուկ դիրք են զբաղում գրական և բարբառային ԴՄ-ների միջև՝ ընդհանրություններ ու շփման եզրեր հանդես բերելով թե մեկի և թե մյուսի նկատմամբ:

Իերված ընդհանրություններից ու տարբերություններից հետո կարելի է առանձին-առանձին ուսումնասիրել այն աղբյուրները, որոնք դարձվածների առաջացման ու կազմության հիմք են ծառայել: Այստեղ, բնականաբար, ընդհանրություններ կլինեն նաև բարբառային դարձվածների հետ, որովհետև ժողովրդախոսակցականների, բարբառայինների և ընդհանրապես դարձվածային միավորների ծագումնաբանական աղբյուրները հիմնականում նույնն են:

Կազմախոսական ԴՄ-ներ — Ինչպես համալեզվական, նրանից սովելի ժողովրդախոսակցական խոսքում անհամեմատ մեծ թիվ են կազմում հատկապես մարմնի մասերի անվանումներով բաղադրված դարձվածային միավորները: Եզրակացությունը պարզ է՝ ժողովուրդն ամենից առաջ իրեն մոտիկ, իրեն ծանոթ, իր շրջապատում գտնվող առարկաների ու երևույթների վերա-

բիրյալ է վերացարկումներ կատարում, իսկ դարձվածներն, անշուշտ, մտա-
 ծողութեան վերացարկման արդյունք են, որոնք լեզվական մարմնավորում
 են ստանում ու վերախմբավորված կերպով, փոխաբերական իմաստնե-
 լով, սարքեր հասկացութիւններ արտահայտում: Ստացվում է արտահայ-
 տութեան և բովանդակութեան պլանների անհամապատասխանութիւն, որը
 հենց դարձվածի էութիւնն է: Եվ քանի որ մարդուն ամենամոտ օբյեկտը՝ ա-
 նարկան, իր օրգանիզմն է, այդ իսկ պատճառով մարմնի մասերի անվա-
 նումներով (սկսած եղունգներից, վերջացրած մազերով) գերակշիռ թվով
 դարձվածներ են կազմվում, իսկ եթե հաշվի առնենք նաև գոհնկարանութիւն-
 ները, զրանց թիվը կանցնի մի քանի հազարից: Այսպես, օրինակ՝ մեր հաշ-
 վումներով հայոց լեզվում գլուխ գերագաս բառով 700-ից ավելի դարձված-
 ներ կան, իսկ եթե նկատի ունենանք նաև դրանց բազմիմաստութիւնը, այդ
 թիվը կձգտի հազարի, որովհետև սույն դարձվածներից շատերը, բացի իրենց
 բուն իմաստներից, ունեն նաև 2—7 և ավելի իմաստներ: Այսպես՝ գլուխ
 բարձրացնել դարձվածն ունի 6 իմաստ՝ 1. ապստամբել, ոտքի ելնել, 2. հա-
 կահատել, վիճել, 3. ըմբոստանալ, շենթարկվել, 4. գոյանալ, առաջանալ, 5.
 աշխուժանալ, 6. միտքովել, Գլուխ դնել-ը՝ 7 իմաստ՝ 1. պառկել, հանգստա-
 նալ, 2. մեկով զբաղվել, մեկի մասին հոգալ, 3. մեկի հետ հարմարվել, 4.
 հետամուտ լինել, 5. վիճել, կռվել, 6. ղեկավար նշանակել (մեկին), 7. կյանք
 տալ (մի բանի համար մեռնել): Այդպես էլ՝ գլուխ ունենալ-ը ունի 7. գլխին
 դնել-ը՝ 6, գլուխ պահել-ը՝ 5, իմաստներ և այլն:

Որ իսկպպես լեզուների դարձվածային ֆոնդի համակարգում թվային քա-
 նակով սոմատիկ դարձվածային համակարգն է գերիշխողը, հաստատում է
 նաև մեր վիճակագրութիւնը. այսպես՝ գլուխ բաղադրիչով հայերենում կա
 691 դարձված, աչխ-ով՝ 612, սիրտ բառով՝ 395, ձեռք-ով՝ 380, ոտք-ով՝ 315,
 բերան բառով՝ 268, լեզու բաղադրիչով՝ 180, քիթ բառով՝ 166, ականջ-ով՝
 145, մատ-ով՝ 78, առամ-ով՝ 65, մազ-ով՝ 40 և այլն:

Աներկրա պեսք է ասել, որ մեզ ծանոթ գրեթե բոլոր լեզուներում նույն-
 պես կազմախոսական դարձվածային միավորները մեծ թիվ են կազմում, և
 թվային արտահայտութիւնը գրեթե նույն բաշխվածութիւնն ունի. այսինքն՝
 ավելի մեծ թիվ են կազմում գլուխ, լեզու, աչխ, սիրտ, ոտք, ձեռք բաղադրիչ-
 ներով կազմվածները: Հայերենի համեմատութիւնը ուսերենի, անգլերենի
 և ֆրանսերենի դարձվածաբանական բառարաններում վերևում բերված կազ-
 մախոսական դարձվածների թիվը անհամեմատ քիչ է, յուրաքանչյուր գե-
 րագաս բառով կազմված ԳՄ-ների թիվը չի անցնում 20—50 սահմաններից:
 նկատելի է, որ այդ լեզուներում նշված դարձվածներից շատերի իմաստները
 համընկնում են:

Այժմ, առանց բնագրային օրինակների, բերենք գլուխ բառով ժողովրդա-
 խոսակցական լեզվում ավելի մեծ տարածում ստացած դարձվածներից մի
 քանիսը՝

գլուխ բերել — հաջողեցնել, ավարտել, գործը վերջացնել, մի բան կազմա-
 կերպել,

գլուխ գալ — իրականանալ, հաջողվել, իրագործվել, գործը ավարտվել,

գլուխ տաճել — շատախոսել, ձանձրացնել, շողակրատել,

գլուխը ոտել (աղալ) — թաքուն (դավադրաբար) սպանել, ոչնչացնել,

գլուխը լալ — իր կամ մեկի անհաջողութեան, դժբախտութեան վրա մտածել,

գլուխը կոտցնել — խուճապի մատնվել, մոլորվել, անելիքը չիմանալ,

գլուխը ծախված — խիստ զբաղված, ժամանակ շունեցող, գործերի մեջ թաղ-
 ված,

գլխին գոտ տալ — անմիտ բաներ ասել, նաև՝ մտածել,

գլխին խսրթա (փորձանք) դառնալ— անախորժութեան պատճառ դառնալ,
գլխին սև բերել— փորձանքի մեջ գցել, վշտացնել, տխրեցնել,
գլխին շան լափ լցնել— նախատել, խայտառակել, ամոթանք տալ, պարսա-
վել,

գլխից ձեռք փաշել— մի բան անելու, ձեռնարկելու համար մահից էլ չվա-
խենալ, մահը աչքն առնել, վտանգավոր քայլի դիմել,

գլխում նստել— մի բան հասկանալ, ըմբռնել, մի բան զլխից դուրս չգալ:

Ծվ կայսպես, կարելի է հարյուրավոր օրինակներ բերել: Այս բազմաթիվ համագործածական դարձվածների կողքին, նույն զլուխ բառով կան նաև ոչ քիչ բարբառային դարձվածներ, որոնց մասին խոսվելու է բարբառների բաժ-
նում:

Հայերենի դարձվածային հարուստ ֆոնդում աչք բառով կազմված 660-
ից ավելի դարձվածների ճնշող մեծամասնությունը նույնպես ժողովրդախո-
սակցական են. բերենք դրանցից մի քանիսը միայն՝

աչք առնել— մի բանից անհաջողության հանդիպել, շարակնել,

աչք գցել— աչքադրվել, մեկին կամ մի բան հավանել,

աչք ծակել— խիստ ակնառու լինել, նախանձ շարժել,

աչք (աչքերը) բռնել— անեծքի արտահայտություն (թող կուրանա),

աչք դուրս— ամուսնական կյանքին անհավատարիմ, ամուսնական ուխտը
դավաճանող,

աչք դուրս գալ— անեծքի արտահայտություն (տեսողությունից զրկվել),

աչք ծակ— ազահ, անկուշտ, ընչաքաղց,

աչք կուշտ— իր ունեցածով բավարարվող, գոհ, ուրիշի ունեցվածքին աչք
չդնող,

աչքի փուշ դառնալ— սաստիկ ատելի դառնալ, շտիրվել, արգահատելի դառ-
նալ,

աչքերին փոշի (թոզ) փշել— խորամանկությամբ խաբել, մոլորեցնել, ապա-
կողմնորոշել, շնչին բանով շլացնել, հրապուրել,

աչքով տալ— իբր թե շար աչքով նայելով՝ մի բանի վնաս հասցնել, անհա-
ջողության մատնել, գործը ծախողել և այլն:

Ինչպես ասվեց վերևում, հայերենում ֆիք բառով կազմված կա 166
դարձված, որոնց կեսից ավելին գործածվում են ժողովրդախոսակցական շեր-
տում. ահա դրանցից մի քանիսը՝ ֆքեն (ֆքից) գալ— հարամ լինել, չկա-
րողանալ վայելել, ֆքից ընկած— շատ նման, ֆքի մազ— շատ բծախնդիր,
մանրակրկիտ մարդ, ֆքի ծակ— բանականություն, խելք, դատողություն, իր-
թին շղեն— շհավանել, բանի տեղ շղենել, ֆքի ջուրը փաշել (մեկի)— մեկի
հոգսը հոգալ, նազը տանել, ֆքը բռնես՝ հոգին կտա— շատ հյուծված, տը-
կար, հիվանդ, ֆքը բարձր— ամբարտավան, գոռոզ, շատ հպարտ, շհավան.
մեկի մեջ այս հատկանիշները ավելի ընդգծելու համար ժողովուրդն ստեղ-
ծել է այս դարձվածի սաստկական տարբերակը՝ ճանը (լուց) ֆքից ընկնի՝
նազար կտոր կլինի: Ժողովրդախոսակցական լեզվում հաճախ ֆիք բառին
զուգորդվում է մարմնի մեկ ուրիշ մասի անվանում, որով ավելի է սաստ-
կանում խոսքի ուժն ու ազդեցությունը՝ ֆիք ու բերանը (մոտաբը) շարդել,
ֆքեն-բերեն բերել, ֆքով-մոթով շլինել, ֆիք ու մոտաք անել, ֆիք ու աչք
դառնալ (մեկին շատ երկար սպասել) և այլն:

Քիք բառով կազմված դարձվածների՝ խոսքին պատկերավորություն ու
արտահայտչականություն տալու լայն հնարավորությունները ցույց տալու
նպատակով, ծաղկաքաղի կարգով բերում ենք երգիծաբան Գագիկ Դավթյանի
«Բալլադ քթի մասին» երգիծական ստեղծագործությունը, որտեղ ֆիքը գոր-
ծածվել է թե՛ իսկական և թե՛ փոխաբերական իմաստներով:

Ախր այս քիթը...

Ինչեր աես, որ մեր գլխին Ըս չի բերել:

... Ես մի հրաշք աղջիկ տեսա,

Աես իրոք թուել էր Ըս

Մեր Գոյալի վրձնի քրից...

Ջահել էի դեռ երևի,

Ու չէր անցել քրիս քամին:

Խելքս դրի քրիս խելքին՝

Նա իմ քրից բռնած տարավ...

Մեկը ուներ տափակ մի քիթ,

Պաշտոն տվին մի օր Ըս,

Քիթը ցցեց ու քրի տակ

Ծիծաղում էր մարդկանց վրա...

Հազար անգամ խրատեցին,

Բայց իր էջն էր քշում էլի...

Ոտքը քարին դիպավ մի օր՝

Փովեց գետին... քիթը ջարդեց...

Այս Ըսրեկը շատ էր սիրում

Սրան խայթել, Ըսան բռթել,

Գործերի մեջ սրա, Ըս

Ծատ էր սիրում քիթը խոթել...

... Քիթս կախած, մտամուրր

Ոտքով մի կերպ տուն գնացի,

Իսկ տունն ամբողջ սպատում էր

Ինձնից բաց՝ Ըսն հացի...

Չեմ հանդիպել անքիթ մարդու,

Հավատացեք, ճիշտ եմ ասում,

Բայց, արի տես, որ շատ հաճախ

Քրածակն է մեզ պակասում:

(«Ոգնի», 1986, № 21):

Կազմախոսական դարձվածներից բերենք ևս մի քանիսը, որոնք մեծ տարածում ունեն ժողովրդախոսակցական լեզվում: Ուտֆերն ընկնել (խնդրել, պաղատել, աղերսել), լեզուն լալկել (կարկամել, ասելիքը մոռանալ), լեզուն տակը դնել (ձայնը կտրել), մատի փաթաթան անել (մի բանի մասին շատ խոսել), ականջին օղ անել (ի գիտություն ընդունել), պոչ խաղացնել (խորամանկել, գործը ձգձգել), կակաղ դամարբ բռնել (մեկի թույլ կողմն իմանալ), հոգին բերանը բերել (շատ շարշարել), մագերբ բիգ-բիգ կանգնել (խիստ զարմանալ), մուրազը փորը մնալ (իղձը չկատարվել), պոտոր աեղը դնել (մեկին լավ խրատել, դասը տալ), մատների արանքով նայել (առանց պատշաճ ուշադրություն, ի միջի այլոց մոտենալ որևէ հարցի), ոտքը իր կարպետի (վերմակի) շափ մեկնել (ունեցած միջոցների չսփոփ ապրել, չսփը ճանաչել), բեղի տակով անցնել (մեկի կարծիքը հարցնել իմիջիայլոց, իբրև թե բանի տեղ դնել), բերանի գուն իմանալ (մեկի տրամադրությունը շոշափել՝ ինչ-որ բանի կապակցությամբ), բուրբ կատիկը բուշել (սաստիկ վախենալ, ահաբեկվել) և այլն:

Կենդանիների անվանումներով ԴՄ-ներ— Ժողովրդախոսակցական դարձվածային համակարգում կազմախոսականներից հետո ներկրորդ տեղը զբաղեցնում են տվյալ ժողովրդի ընտելացրած կենդանիների ու թռչունների (շուն, կատու, ձի, էջ, խոզ, ոչխար, հավ, բադ և այլն), ինչպես նաև իր շրջապատում ապրող կենդանիների, թռչունների, զագանների, սողունների (դայլ, աղվես, արջ, բորենի, ագռավ, օձ և այլն) անվանումներով կազմված 'ԴՄ'-ները: Ըստ որում, նման դեպքերում, ժողովուրդը կենդանիներին բնորոշ հատկանիշներով՝ վերաիմաստավորված կերպով բնութագրում է մարդկանց, նրանց հատկանիշներն ու արարքները: Այսպես, օրինակ՝ աղվեսի հատկանիշով բրնութագրվում է խորամանկ, ի վնաս ուրիշի իր անելիքը լավ իմացող մարդը, իսկ ագահ և շար մարդը համեմատվում է գայլի հետ (գայլի ախորժակ ունենալ, գայլից գառ պահ տալ, գառան մորթով գայլ, գայլը ամպ օր է ման գալիս, գայլի գլխին ավետաբան կարգալ և այլն): Նույն ձևով՝ շարալեզու, շար հայացք, նախանձ, վատ կամեցողություն ունեցող մարդկանց ժողովուրդը բնութագրել է օձին բնորոշ հատկանիշներով. նման դարձվածները կազմվել են օձ բաղադրիչով (օձի կծած, օձի լեղի, օձի բույն, օձի խելք, օձի հայացք, օձի պես սառն, օձի նակառ, օձի բնավորություն) և այսպես՝ 30 դարձված միայն օձ բաղադրիչով:

Քանի որ մարզու ամենաշուտ ընտելացրած և ամենամոտ կենդանին շունն է, որն իր լավ ու վատ հատկանիշներով դարձել է մարդուն ու նրա բնավորության հատկանիշները վերաիմաստավորված կերպով բնութագրող հա-

մեմատության եզր: Այդ է պատճառը, որ կենդանիների անվանումներով ամենաշատ դարձվածներ ժողովուրդը կազմել է շուն բառով: Նշենք դրանցից մի քանիսը. շունը ձեռքից հաց շառնել (մեկին շատ վատ վիճակի մեջ դնել, խայտառակել, սաստիկ անպատվել), շունը շան քաք չի ծամի (կծի) (միևնույն գործի, զբաղմունքի տեր մարդիկ իրար պաշտպանում են, իրար չեն դավի), շունը շապիկ է հագել, կատուն՝ վարտիվ (մեծ բազմություն է հավաքվել, խառնաշփոթ վիճակ է տիրում), շունը տերը չի ճանաչում (կարգ ու կանոն չկա, խառնաշփոթ վիճակ է), շան քթից ջուր խմել (շատ շարժարվել, տառապել), շան օտն ընկնել, շան օր քաշել, շան երես ունենալ և այլն:

Հետաքրքիր է, որ շան բախտ ունենալ դարձվածը դրական իմաստով է գործածվում. ամենայն հավանականությամբ դա կապված է շան համաստեղության հետ, որի երևալու դեպքում մարդիկ հաջող ճանապարհորդություն են կատարել: Շան լեզու ունենալ դարձվածը նույնպես դրական իմաստով է գործածվում. նշանակում է ճարտարախոս, համոզող, երեխաների համար՝ քաղցրալեզու, շատ բառեր իմացող: Եվ այսպես, միայն ժողովրդախոսակցականում շուն բառադրիչով կա մոտ 80 դարձված:

Հիմար, տգետ մարդուն բնութագրելու, կամ անիմաստ, ապարդյուն գործը որակելու համար ժողովուրդը հարմար է գտել օգտագործել էլ բառը և այդ կենդանուն բնորոշ հատկանիշները: Հետաքրքիր է նկատել, որ հթե այդ բառով մենք ունենք 40-ից ավելի ԴՄ-ներ, Ուշակովի ռուսաց լեզվի դարձվածաբանական բառարանում այդ բառով ոչ մի դարձված չի արձանագրված, նման դարձվածների մենք չենք հանդիպել նաև անգլերենի ու ֆրանսիերենի դարձվածաբանական բառարաններում: Ժողովրդախոսակցական լեզվում այդ բառով կազմված ամենագործածական ԴՄ-ներից են՝ էլը ցեխից հանել (1. մի կերպ դժվարությունից դուրս գալ, 2. գլուխը պահել), էլի իր էլը էջել (ուրիշի դիտողությունները չլսել, իր ասածը անել), էլը կորցնել՝ փալանը փնտրել (կարևոր, հիմնական արժեքներից զրկվելուց հետո անարժեք բաների մասին մտածել), էլի ականջում քնած (չըջապատի իրագարծություններից անտեղյակ, տխմար մարդ), էլի նահատակ դառնալ (աննպատակ զոհվել, հիմար բանի համար կյանքը տալ), էլից վախենալ՝ փալանը ծեծել (զայրույթը անմեղ բանի վրա թափել, ուժը փոքրի վրա պատել) և այլն:

Ժողովրդախոսակցական դարձվածներում քիչ չեն նաև մարդկային դանազան հարաբերությունների, կյանքի տարբեր դեպքերի ու իրագարծությունների, մարդու հոգեվիճակի, ապրելակերպի, կյանքի ու կենցաղի հիման վրա ստեղծվածները, որոնցով ժողովուրդը ավելի դիպուկ ու պատկերավոր է դարձնում իր խոսքը, համեմում իր ասելիքը: Օրինակ, ինչքան տարողունակ է շատ սիրուն էին՝ ծաղիկ հանեցին՝ ժողովրդական դարձվածը, որով ակնարկվում է մարդու ունեցած հոգսի վրա նոր հոգսի ավելանալը: Ահա թի այդ խորիմաստ դարձվածը ինչպես է օգտագործում «Երեկոյան Երևան» թերթը. «Մեր առևտրի համակարգը իբրև թե քիչ էր ապականված, հիմա էլ պրեզիդենտական 28 տոկոսը ավելացավ, առևտրի աշխատողների աչքը լույս... իսկ զբնորդներս՝ շատ սիրուն էին՝ ծաղիկ էլ հանեցին» (ԵԵ, 12. 10. 92): Այս դարձվածին համանիշ է թուխ էր՝ թուխ ամպն էլ վրան դրեց, կամ բարբառային քիչ այլք ունեին՝ մեկն էլ ավելացավ:

Ժողովրդական խոսքում շատ տարածված է նաև արանքներով սև կատու է անցել դարձվածը, որով նշվում է մտերիմների միջև առաջացած դժգոհությունը, սրա մի տարբերակն է՝ երկուսի ջուրը մի առվով չի գնում: Իսկ ձին շառած մսուրը կապել, ձուկը ծովում բազառ անել ԴՄ-ներով ժողովուրդն ընդգծում է անհիմն գործ բռնելը, մի բան շարած՝ դրա մասին խոսելը: Նախկին փառքից զրկված, դիրքն ու գործությունը կորցրած մարդուն ժողովուրդը

բնութագրում է ձին տակից փախած կամ ձիուց իջնել՝ էշ նստել դարձված-
ներով:

Լեզվի դարձվածաբանական այս շերտում, թե՛ բանավոր և թե՛ գրավոր
խոսքում հաճախ ենք հանդիպում հետևյալ դարձվածներին. աղն է կերել
մատաղը, հալած յուզի տեղ ընդունել, մեկի առաջ խունկ ծխել, իր խաչը
կրել, երկու ջրի (կրակի, ֆարի) արանում մնալ, խոսքը կտուրը գցել, կամը
կալից հանել և այլն: Կամն առնել, ֆարերն ընկնել ԴՄ-ով ժողովուրդը խոր-
հրդանշում է խոսակցության թեման փոխելու կամ խոսքը կտուրը գցելու
իմաստը: Իսկ կամը կալից հանել-ը ավելի է սաստկացնում ասույթի իմաստը.
այսինքն՝ այս երկու ԴՄ-ները կողք-կողքի գործածելը ոճական այն հնարն
է, որը կոչվում է գրադացիա: Եթե նախորդ երկու ԴՄ-ների իմաստը խոսակ-
ցության նյութը փոխելն է, ապա՝ կամը կալից հանելու իմաստը հիմնական
հարցից շեղվել է նշանակում, գլխավոր խնդիրը ընդհանուր օղակից դուրս
բերելու հանգամանքն է ընդգծվում՝ «... Լուսն ուղտ ե՛լ դարձնում. խոսքը ամ-
բողջ Մոսկվային շի վերաբերում, ոչ... Կամը կալից մի հանե՛ք, ամոթ է...»
(Գ. Թ.):

Կովի մեջ փլավ շեն բաժանի դարձվածով Աղասի Այվազյանը շատ լավ
է ընդգծում խաշակիրների պարտությունը. «Թեպետ արևելյիներին ասելով՝
կովի մեջ փլավ շեն բաժանում, բայց խաշակիրները կերան իրենց փլավը՝
ու՞թ հազար հոգի մնացին Հունգարիայում և այդքան էլ՝ Բուլղարիայում»:
Ինչպես բերված, այնպես էլ առու թոչել կենցաղային դարձվածները օգտա-
գործվում են նաև քաղաքականության մեջ՝ ասելիքը պատկերավոր դարձնե-
լու համար. վերջին դարձվածով ժողովուրդը քողարկված կերպով, նրբանկա-
տորեն նշում է արտամուսնական կյանքով ապրած կնոջը, աղջկան. «Քաղա-
քականությունը հաճախ նման է առու թռած կնոջ, որի հազարափեշ շորի
տակ ամեն մառ ու մթին պատմություն կա թաքնված» («Մունեստիկ», 1990,
№ 17—18):

Եղանակավորող դարձվածներ— Խոսքը ոճավորելու, խոսողի վերաբեր-
մունքն ու զգացմունքներն արտահայտելու, խոսքին հուզարտահայտչական
և բանական տալու անփոխարինելի միջոցներ են եղանակավորող ԴՄ-ները, որոնք
մեծ մասամբ հանդես են գալիս ժողովրդախոսակցական լեզվում, հատկա-
պես բանավոր խոսքում և հիմնականում պատկանում են հասարակաբանու-
թյուն կոչվող ոճական շերտին: Վերաիմաստավորված այսպիսի բառակա-
պակցություններում խոսողն իր իմացական և գնահատողական վերաբեր-
մունքն է արտահայտում իրողության, եղելության, դեպքերի ու զանազան
կարգի հարաբերությունների նկատմամբ: Այս կարգի դարձվածների միջոցով
խոսողը մի դեպքում իր գոհունակությունն ու բարեմաղթությունն է արտա-
հայտում (Փառք Աստծու, Աստված բարի վայելում տա, բերանդ տանա՛ր,
հոգուն մատաղ), մյուս դեպքում՝ հանդիմանություն ու հեղանք (աչքերը
բռնի, կերածդ հացը հարամ լինի, բեռեկինդ վանքը), մի այլ դեպքում՝ զայ-
րույթ ու նախատինք (ձյունը գլխիդ, խելի տոպրակ, անտե՛ր անեմ, տերը
թաղեմ), ինչպես նաև՝ արհամարհանք, ափսոսանք, զարմանք և այլն (Գնո՛ւ
գործիդ, համփեղ չալի՛ր, աչխո՛ւ ֆոռանա, լույսս խավարի, տերդ խնդա, Խաղ-
դասա՛ր, թան էլ չէ, մաժուն) և այլն:

Վերաիմաստավորված անեծքներն ու օրհնանքները նույնպես եղանակ-
ավորող դարձվածների մեջ են մտնում և լայնորեն կիրառվում ժողովրդա-
խոսակցական լեզվում ու բարբառներում. (Աստված արե՛ղ պահի, նանա-
պարհիդ միշտ կանաչ լույս վառվի, հող բռնե՛ս՝ ոսկի դառնա և Աստված զբլ-
խիդ խոռով կենա, սատաճայի փայ դառնաս, համփեղ մեկտակվի... և այլն):

ԲԱՐԱՍԻԱՅԻՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ.— Այժմ տեսնենք, թե ինչ

առանձնահատկություններ ունեն բարբառային դարձվածները և ինչով են դրանք տարբերվում ժողովրդախոսակցականներից:

1. Եթե ժողովրդախոսակցական ԴՄ-ները ընդգրկման ավելի լայն շրջանակներ ունեն և գրեթե հասկանալի են հանրության բոլոր խավերին, ապա բարբառայինները ընդգրկման ավելի նեղ սահմաններում են պարփակված. տարածքային կիրառություն ունեն, բարբառային բառերի ու քերականական կառուցվածքի նման տեղայնացված են, և երբեմն մի բարբառի դարձվածը հասկանալի չէ մյուսի համար: Այդ պատճառով էլ հաճախ շին ընդհանրա-նում և ժողովրդախոսակցական շին դառնում:

2. Այդ տարբերակման և շինդհանրացման հիմնական պատճառը բարբառային դարձվածների բառապաշարային շերտն է ու տվյալ բարբառին հատուկ հոլովման ու խոնարհման համակարգը:

3. Յուրաքանչյուր բարբառի դարձված օժտված է տվյալ բարբառին հատուկ շեշտով ու հնչերանգով:

4. Բարբառային դարձվածները բարբառախոս կերպարի ստեղծման ու տիպականացման, ինչպես նաև խոսքի ոճավորման լավագույն միջոցներ են:

5. Սրանք ժամանակաշրջանի և միջավայրի կոլորիտ ստեղծելու հիանալի գործոններ են:

Բարբառային դարձվածները համընդհանուրի և ժողովրդախոսակցականների նման, ոճավորում են խոսքը, լեզուն դարձնում պատկերավոր ու արտահայտիչ: Դրանց միջոցով խոսողը կամ գրողը նկարագրում է գյուղական կյանքն ու կենցաղը, գյուղացու կամ տվյալ տարածքի սովորություններն ու բարքերը: Դրանցով ավելի է ընդգծվում խոսողի կամ գրողի բարբառային պատկանելությունը, տարածքն ու միջավայրը: Բարբառային որոշ դարձվածներ անցնում են ժողովրդախոսակցականին և ապա՝ մշակելով մտնում գրական լեզու: Ցավ ի սիրտ պետք է ասել, որ ժողովրդական լեզվի այս կուռ ու իմաստալից գունձերը քիչ են մշակվում մեր գրողների կողմից. որոշ գրողներ միայն, ինչպես, ասենք, Խ. Աբովյանը, Պ. Պոռչյանը, Ղ. Աղայանը իրենց ստեղծագործություններում վերարտադրել են մայրենի բարբառային դարձվածները՝ հարազատ մնալով գյուղացու լեզվամտածողությունը, նրա բառ ու բանին, խոսք ու զրույցին: Ահա Պ. Պոռչյանի օգտագործած դարձվածներից մի քանիսը՝ սրտին երկու թիզ եղ կանգնեց (շատ ուրախացավ), Խեշանեց Խեշանի թուր կատիկը թռավ (շատ վախեցավ), Սմբատի բանը բուրդ էր... արշունը գլխին տվեց (վիճակը վատ է, սաստիկ մոլեգնել է), Գիշերը, երբ ձեռն ու ոտը ֆաշվեց (խաղաղվեց), ավազակների ճանը ալշու կանգնեց (գործը հաջողվեց):

Ինչպես համագործածական, նույնպես և ժողովրդախոսակցական ու բարբառային դարձվածների առաջացման աղբյուր կարող են լինել ամենատարբեր երևույթներ, առարկաներ ու հանգամանքներ, կենդանիներ, հավատալիքներ, արհեստներ ու արվեստներ, մարդկային փոխհարաբերություններ ու բնավորության գծեր, մարդու հետ առնչվող ամեն ինչ:

Ինչպես տեսանք վերևում, ամենից շատ ԴՄ-ներ կազմվում են մարդու մարմնի մասերի անվանումներով. այդպես է նաև բարբառներում:

Կազմախոսական ԴՄ-ներ — նկատելի է, որ մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածների իմաստները տարբեր բարբառներում մեծ մասամբ համընկնում են (այդպես է նաև տարբեր լեզուների դարձվածային համակարգում). դա բացատրվում է ժողովրդի տարբեր հատվածների (նաև տարբեր ժողովուրդների) մտածելակերպի մոտիկությունով: Օրինակ՝ աչք փակել (մի բանի նկատմամբ անտարբեր լինել, շտեմնելու տալ) համալեզվական դարձվածը տարբեր բարբառներում տարբերբայ բաղադրիչներով է ար-

տահաշտովում, բայց իմաստը չի փոխում (աչք գոցել, աչք խփել, աչքը նեպել, աչքը գոց պրհել, աչվին խուփ ընել...) կամ գլխից ձեռք փաշել-ը նույնպես տարբեր դրսևորումներ ունի՝ գլխից ձեռք վեր ունել, գլխեմեն ձեռք վերցնել: Հետաքրքիր է նաև այն, որ երբեմն մի բարբառում ստեղծված դարձվածը մյուսում չի լինում, նույնիսկ դրա հոմանիշը չի ստեղծվում: Օրինակ, Գյումրիի բարբառում տարածված գլխին փառկտի խաղալ-ը չկա ոչ մի բարբառում. դա գլխին խաղ խաղալը չէ և ոչ էլ՝ գլխին օյին բերել-ը, ավելի մոտիկ է քթից բռնած ման տալու իմաստին:

Բերենք կազմախոսական մի քանի բարբառային ԴՄ-ներ՝ գլխին գդակ դնել (հիմարացնել), գլխին շափուջ ջարդել (իր կամքը թելադրել մեկին), զրլուխը բռչ (հիմար), գլխին օղբաթ խաղալ (փորձանքի բերել), սիրտը թոլ ըլնել, սիրտը կրունկներն իջնել (սաստիկ վախենալ), տաֆ ջուրը բերանում գյոլ շի տա (զաղտնիք չի պահում) և այլն:

Կենդանիների անուններով — Բարբառներում մեծ թիվ են կազմում նաև կենդանիների ու թռչունների անվանումներով կազմված դարձվածները. ա՜ն՝ դրանցից մի քանիսը՝ էշից ընկած (նվաստացած), էշին նստելը մի այլք է, իջնելը՝ երկու (մի գործում կրկնակի սխալվելը, կամ մի գործ բռնելը և կիսատ թողնելը), էշ ուտել, էշ մեծանալ (անգրագետ մնալ), էշի գատկին (ոչ մի անգամ), էշի պոչ (ոչ մի բան), շուներ մի յարով չի սատկի (սովում է անհաջող մարդու հասցեին), չբլաղ ջանին կատու շալկել (հոգսի վրա հոգս դնել), դավեն նստել է՝ կուզեկուզ ման կուզա (բացահայտ երևացող վատ գործը ուզում է թաքցնել), դավեն իրեն շատ է բոբիկ տեսել (տվյալ վիճակը այդ մարդու համար շատ սովորական է), էծը էծին լավ է, ֆան մէ սուրու ոշխար (սովում է նույն տարիքի կամ սեռի երեխաների իրար հետ լինելու մասին), գիլթոգի անել (նույն է՝ աչբերին թոզ փշել):

Գյուղատնտեսության հետ կապված ԴՄ-ներ — Հողագործությունն է եղել գյուղացու հիմնական աշխատանքը. դրանով է պայմանավորվել նրա ապրուստն ու կյանքը. դրա համար էլ բարբառներում ամենից շատ դարձվածներ ստեղծվել են կապված հողի, լծկանի, գյուղատնտեսական բազմազան աշխատանքների հետ: Թվարկենք դրանցից մի քանիսը՝ առանց բացատրությունների՝ կամն առնել՝ փառերն ընկնել, կալից ինչ տեսանք, որ կալատակից ինչ տեսնենք, ծուռ ակոսը մեծ եզնից է, անգլուխ սամի, հին դարմանը ֆամուն տալ, կերել է կանաչ խոտը, չի եկել լծան մոտը, չիբուխը կամին դնել, սանդ զարկողին թխկ անել, էն կալի հերն անիծած, որի առաջին լուծը կով է լծված և այլն:

Հավատալիների հետ կապված ԴՄ-ներ — Հավատքը միշտ էլ ուղեկցել է մարդուն՝ և կապված է թե՛ հաջողությունների և թե՛ անհաջողությունների հետ. այդ է պատճառը, որ բարբառներում բավական մեծ թիվ են կազմում Աստծո, սրբերի, շարքերի, սատանաների անուններով կազմված դարձվածները. բերենք մի երկու նմուշ՝ երկնային դրախտի փայլ ու բաժին դառնա, Սիմվալոն ծերունի դառնաս, սատանին շարուխ հագցնող, սատանի ետևի ոտները նալող, սատանի շողփ ու շրաղփ դառնալ, գետնի օխտը դաթը անցնի, զրբկ ու բրբկ էղնիս և այլն:

Գունանունները՝ նույնպես ժողովուրդը կապում է հաջողությունների կամ անհաջողությունների հետ և դրանցով կազմել է դարձվածներ, որոնցով խորհրդանշում է կյանքի դրական ու բացասական երևույթները (կանաչ համ-

¹ Գունանուններով կազմված դարձվածների մասին ավելի հանգամանորեն տե՛ս մեր հոդվածը՝ ԲԵՆ, 1992, № 1:

փա, կարմիր արև, կարմիր օր, սև կապել, սև հագնել, սև ու սուգ մտնել, ս'իրտը սենալ...

Կարմիր օրս երբ սևացավ,
Պարտք մնացի՝ թևն բիշ,

Պարտատիրոջ սիրտն էլ սևացավ,
Եկավ, տարավ ամեն ինչ (Ղ. Աղ.):

Բարբառներում բազմաթիվ դարձվածներ են ստեղծվել նաև կապված դպրության (գիր ու պտիկ անել, թիվ ու հեսաբ շիմանալ, փորը այրի կտոր շլինել), գեներերի տեսակների (գյուլլախորով եղնիս, թոփ ու բարխանի ուստ գաս, իրար հետ թուր ու թվանք լինել), ինչպես նաև կյանքի տարբեր երև-վույթների, մարդկային հարաբերությունների և այլ հանգամանքների հետ: Բերենք նման խառն ԴՄ-ների մի քանի օրինակներ՝ հոգին ջուրը դնել, խուն-ջանի կապը կտրվել, անծիրը ծնեցնել, շալվարը (փոխանը) կատու գցել, կր-տուցը փախել ֆսել, կրունկը դեսն էլնի, շուն ֆերթել, շոռ աչք, թոկից փա-խած, նոռթած բերան, բեղից բնկած բրինձ, դուռ տփողի դուռը կտփվի (արածո վատությունը դեմդ կգա), և այսպես կարելի է շարունակել...

Ժարգոնային ԴՄ-ներ— Հայտնի է, որ բառապաշարի ժողովրդախոսակ-ցական շերտում և հատկապես բարբառներում խոսակցական բառապաշա-րին ուղեկցվում են այնպիսի բառեր ու դարձվածներ, որոնք ստեղծվել և օգտագործվում են հասարակության սոցիալական տարբեր խավերի ու խրմ-բավորումների կողմից: Այդպիսի բառերի և դարձվածների օգտագործումը, ինչ խոսք, իրախուսելի չէ, բայց ոճական նպատակներով, կոլորիտ ստեղ-ծելու, հերոսներին բնութագրելու, նրանց խոսքը ոճավորելու համար հաճախ անհրաժեշտություն է դառնում դիմել նաև նման դարձվածների: Այսպես՝ երիտասարդության մեջ լայն տարածում ունի կայֆ անել (բռնել) ժարդո-նային դարձվածը, որով երիտասարդներն ընդգծում են ինչ-ինչ պոյունանե-րում ու հանգամանքներում իրենց լավ զգալու, հաճելի ժամանակ անցկաց-նելու պահերը: Իսկ մանթ ընկնել, մանթրած ընկնել ժարգոնային դարձված-ներով ընդգծում են շփոթվելու, խիստ անհարմար, անհարկի վիճակի մեջ ընկնելու պահերը: Ֆիտիլ (ֆոփկ) ֆոացնել-ով նշում են խորամանկորեն խու-րելու, խուսանավելու հանգամանքը: Ժարգոնային նոր ԴՄ-ներ են նաև տուշ-կա բռնելը, որ նշանակում է դիմացինի վրա կամ նրա խոսքում սրի է տարօ-րինակ բառ գտնել և նրան ծաղրել, ձեռ առնել: Մոտավորապես նույն երանգն ունի փոստ կապել, փոստ տալ դարձվածը, որի մեջ կա նաև ինչ-որ բան անել իմաստը: Այդպիսի ԴՄ-ներ են նաև ֆուկ անել (հանիրավի զոհել, ան-տեսել), վաբի գնալ (իզուր կորչել, վատնվել), սառույցի (բզի) ֆաշվել (ան-հաջողության հանդիպել, ձախողվել), գլուխ արդուկել (համոզել, խաբել, շա-տախոսելով զահլա տանել) և այլն:

Դոնեկարանություններ— Հաճախ, ինչ-ինչ իրավիճակներից զրդված, ինչ-ինչ նկատուողներով մարդիկ ստիպված են լինում դիմել բառապաշարա-յին մի շերտի, որը ոչ միայն հանձնարարելի ու իրախուսելի չէ ո՛չ ժող-վրդախոսակցական և ո՛չ բարբառային խոսքում, այլև դրանք աղտոտում են լեզուն, անպատվաբեր են գործածության համար: Սակայն, քանի որ ժո-ղովուրդն ստեղծել է գեներիկ բառեր ու դարձվածներ, ուրեմն դրանց կարիքն զգացվել է, և երբեմն հանգամանքների բերումով, որոշ իրավիճակներից ել-նելով, մարդիկ դիմում են լեզվում գոյություն ունեցող նման դարձվածների՝ նորից խոսքի ուժը ընդգծելու, ասելիքը սաստկացնելու, դիմացինին բնու-թագրելու և ավելի տիպականացնելու նպատակով:

Բերենք գեներիկ դարձվածների մի քանի օրինակ, որոնք օգտագործված են գեղարվեստական գրականության մեջ և մամուլում: Մի ցուան մոզին նա-խիրի անունն է արատավորում (ԳԹ), դմակով ոչխար ես, քո փամակը ծած-

կիր («Գարուն»), յուղ ուտող շունը ֆամակից է բեհելու (հասկացվում), նա-
լերը տնկել (Պ. Ղ.), ռեխը շաղ տալ, կամ էջը կսատկի, կամ իշատերը, իրար
բերան թֆել, շան ծիծ կերած, պոչը աղտոտ, փոքր վեց-վեց անել, վախից
տակը լցնել և այլն:

*Դոճհկարանությունները հատուկ են հատկապես բանավոր խոսքին, որ-
տեղ օգտագործվում են ավելի վուլգար տեսակները, որոնք գրի առնելը պատ-
շաճ չէ:*

Համառոտագրություններ

- Ղ. Աղ.— Ղազարոս Աղայան
ԲԵՀ.— Բանբեր Երևանի Քառասարանի (հանդես)
Ե. Ե.— Երեկոյան Երևան (լրագիր)
Գ. Թ.— Գրական թերթ (լրագիր)
Լ. Ա.— Լորիս Կրոյան
Խ. Հ.— Խորհրդային Հայաստան (լրագիր)
Պ. Ղ.— Պատվական Ղուկասյան

Х. Г. БАДИКЯН— Народно-разговорные и диалектные фразеологизмы.— Как словарный запас, так и фразеологическое богатство языка в основном распределяется по трем пластам— литературном, народно-разговорном и диалектном. В статье рассматриваются народно-разговорные и диалектные ФЕ, делается попытка определить их особенности и различительные признаки, а также самые распространенные источники их образования. Выясняется, что в этих двух пластах лексики самые распространенные ФЕ составлялись из названий частей тела и домашних животных. Приводятся также несколько образцов жаргонных фраз и вульгаризмов.